

Միեւնոյն է թէ Դերովրայ ցնծալից երգից, որ ասում է. «Հեղեղատն Կիսոնի մերժեաց զնոսա, — Հեղեղատն Կազիսիմայ, Հեղեղատն Կիսոնի»՝ առաջարկէինք յապաւել վերջին «Հեղեղատն Կիսոնի»ն իբր կրկնութիւն...

Եւ յետոյ կրկնութիւնը վնաս չի կարող տալ Լ. Գրէյին, քանի որ ունի իր որոնած վանկերի թիւը, թէեւ ճիշդ է, որ խանգարում է ենթադրական թուով երկար տողեր կազմելուն...

Վերջապէս այդ կրկնութիւնն անհրաժեշտ է իմաստի տեսակէտով: Երգն ասում է թէ Վարդգէս մանուկը բաժնուելով զնայ «Ի Տուհաց գաւառէն զՔասաղ գետով», որից իմանում ենք, թէ Տուհաց գաւառը Քասաղ գետի շուրջն ու վրան է: Յետոյ երգը շարունակում է. եկաւ նստեց «Չրէշ բլրով, զԱրտիմէտ քաղաքաւ, զՔասաղ գետով», այստեղից էլ իմանում ենք, որ Շրէշ բլուրն ու Արտիմէտ քաղաքը թէեւ Տուհաց գաւառում չեն, բայց Քասաղ գետի վրայ են: Եթէ յապաւենք «զՔասաղ գետով» բառերի կրկնութիւնը՝ մենք չենք իմանայ, թէ ո՞ւր են այդ բլուրն ու քաղաքը: «զՔասաղ գետով»ը թէեւ կրկնութիւն է, բայց նա կրկնում է տարբեր քերականական կապով, նա խնդիր է տարբեր բառերի:

Վերջին աղճատումը, որ Լ. Գրէյ կատարում է զուգարթիւ վանկեր ստանալու համար՝ վերաբերում է Գ. Մազիստրոսի պահած հատուածին: Հին երգն ասում է.

Ո՛ր տայր ինձ զծուխ ծխանի

Եւ դառաւուն նաւասարդի.

Լ. Գրէյ առաջարկում է կարդալ «եւ գառաւում նաւասարդի»:

Այս ձևով տողն ստանում է պէտք եղած ութ վանկը: Բայց «գառաւում» որոշեալ է թէ՛ իբր խնդիր եւ թէ՛ իբր յատկացեալ. նա չի կարող առանց մի մնալ: Հիւանդ թագաւորը ոչ թէ որեւէ նաւասարդի առաւում է ուղում, այլ նոր Տարուան առաւումն է ուղում, երբ ծխանից ծուխ էր բարձրանում եւ իրանք փող ու թմբուկով զուրս էին հանում երէնները թագըստոցներից:

Չնչին բան է թուում մնն, բայց նա հինաւորց կեանքի մի սովորոյթ է մատնանշում, ուստի պէտք է իր տեղը մնայ:

* * *

Սրանք են մեր հեղինակի յապաւումները, որ ինչպէս տեսանք անհիմն աղճատումներ են: Կարծէք յապաւումներից յաւելումներին անցնելու համար՝ հեղինակը յաւելումների շարքի մէջ թիւրիմացաբար դնում է մի առաջարկ, որ իսկապէս յապաւում պէտք է համարէր: Չգիտեմ ի՞նչն է անուշադիր եղած, թէ՞ պարբերականի խմբագրութիւնը:

Յօդուածի սկզբում նա ասում է, թէ իր յաւելումները դնելու է փակագծերի մէջ (էջ 160) եւ Շարայի մասին եղած առասպելը գրում է այսպէս.

Քո Շարայի որկորն է

Մեր Շիրակայ ամբարը(ն) չեն.

Որով ուղում է ասել թէ մն ինքն է աւելացնում: Բայց աւելացնելու կարիք չկայ, քանի որ բնագրի մէջ առանց այդ էլ գրուած է «ամբարըն»:

Հաւանական է, որ կամեցել է մն յապաւել, բայց դրել է ուրիշ փակագծեր, քան պէտք էր: Նրա կարծիքով այդ առածի տողերը եօթնական վանկ ունին. արդ՝ երկրորդ տողը եօթ վանկ կ'ունենայ այն ժամանակ, երբ մն յապաւենք:

Գանք հիմա իսկական յաւելումներին, որ չորս հատ են:

Վահագնի երգի այն տողերը, որ ասում են.

Նա հուր հեր ունէր

Ապա թէ բոց ունէր մօրուս՝

Առաջարկում է կարդալ—

Նա զըհեր հըրոյ ունէր

Ապա թէ բոցոյ ունէր մօրուս,

Այստեղ «հուր» եւ «բոց» բառերը հոլովուած են. այսինքն՝ քերականական տարբերի յաւելում են ստացած:

Լ. Գրէյ այս աղճատումն անհրաժեշտ է համարել պէտք եղած թուով վանկեր ստանալու համար: Այստեղ ոչ միայն բառերի կարգն է փոխած, այլ եւ մեր լեզուի ոգին:

Հայ միտքն այս կէտի մէջ աւանդաբար շարունակում է մտածման միեւնոյն եղանակը պահել: Քրիստոսից առաջ Հայ գուսանն ասում էր «հուր հեր», «բոց մօրուս». այսօր Հայ գիւ-